ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոնդակ Ատրպատականի Առաջնորդական Փոխանորդ Տ. Կարապետ քահանայ Մանուկեանի անունով, որով շնորհուեց լանջախաչ կրելու իրաւունք։ 31 հոկտ. թ. 1396։

Կոնդակ Նոր Նախիջևանի Հոգևոր կառավարութեան նախագահ Մարտիրոս աւագ քահանայ Գանձապետեանի անունով, որով իրաւունք տրուեց կրել ականաչար քահանայական լանջախաչ։ 20 նոյեմբ. թ. 1526։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 645. Նոյեմբերի 5-ին Սինօդը լսեց Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանի հոկտեմբերի 22-ի յայտարարութիւնը, իւր եղբայր Մկրտիչ աւ. քահանայ Տէր Սարգսեանի, որպէս հոգեբաժին հանգուցեալ երիցուհոյ և իւր, 100 ռուբլի Մայր Աթոռին նուիրելու մասին, այն պայմանով, որ յանձնուի այդ գումարը Պետական Դրամատունը և 100 տարի տոկոսներ բերելուց յետոյ, ստանայ Մ. Աթոռը. որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին յանձնել Պետական Դրամատան Երևանի բաժինը Մկրտիչ աւ. քահ. Տէր Սարգսեանի նուիրած 100 ռուբլին, բարդ տոկոսով, 100 տարի ժամանակով. որից յետոյ գոյանալիք ամբողջ գումարը ստանալու է Մայր Աթոռը իբրև հոգեբաժին ի յիշատակ Մկրտիչ քահանայի և նորա երիցուհի Գոհարինէի։

Թ. 659. Նոյեմբերի 7/8-ին Սինօդը լսեց հոգևոր գործերի դեպարտամենտի այս տարուայ հոկտեմբերի 2-ի թ. 8969 գրութիւնը մետրիքական քաղուածների գինուորագրութեան ատեաններին ուղարկելով դեպարտամենտի գրութեան պատճէնը, պատուիրել Կոնսիստորիային անյապաղ կարգադրել, որպէսզի մետրիքական քաղուածներ կազմող հոգևոր հաստատութիւնները և պաշտօնեաները շտապեն

շուտով աւարտեն 1913 թ. յունվարի 1-ին 20 տարին լրացածների քաղուածները, որ և ուղարկեն պատշաճ զինուորակոչ ատեաններին մինչև այս տարուայ դեկտեմբերի 1-ը։

Թ. 658. Նոյեմբերի 7/8-ին Սինոդը լսեց Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ հոկտեմբերի 24-ի և 30-ի թ. թ. 1331 և 1393 կոնդակները Հայոց տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեայ յոբելեանը տօնելու մասին, որոշեց. նախ՝ պատուիրել Մ. Աթոռի տպարանի վարչութեան պատրաստել ժողովնեալ տոմարներ, թերթեր և անդորրագրեր դպրոցական ֆոնդի անունով ստացուելիք դրամներն արձանագրելու համար. երկրորդ՝ ուղարկելով տոմարները, թերթերը և անդորրագրերը թեմերի առաջնորդներին և կառավարիչներին, պատուիրել նոցա Կովկասի հայաբնակ բոլոր քաղաքներում և գիւղերում կազմակերպել ժողովարարութեան գործը յանձնախմբերի ղեկավարութեամբ՝ պարտաւորեցնելով վերջիններին ստացուող դրամը փոխադրել Սինոդին. երրորդ՝ ստացուած նուէրների մասին պարբերաբար տպագրել «Արարատ» ամսագրում. չորրորդ՝ Մայր Աթոռի գանձարանից դպրոցական ֆոնդի համար առանձնացնել տասնեհինգհազար ռուբլու ռէնտաներ. և հինգերորդ պատուիրել Սինոդի հաշուարարական մասին կազմել առանձին ժողովնեալ մատեան դպրոցական ֆոնդի համար ուղարկուող տոմարները, թղթերը և անդորրագրերը մուծելու և նոցա հաշիւը պահելու համար, այլ և ունենալ յատուկ մատեան դպրոցական ֆոնդի անունով ստացուող դրամները մուծելու համար։

Թ. 665. Նոյեմբերի 9/10-ին Սինոդը լսեց հոգևոր գործերի դեպարտամենտի այս տարուայ հոկտեմբեր 2-ի թ. 9041 գրութիւնը դպրոցների աշակերտների զինուորակոչի ենթարկուելու մասին, որոշեց. ուղարկելով դեպարտամենտի թ. 9041 գրութեան պատճէնները, յանձնարարել Մ. Աթոռի հոգևոր ճեմարանի և Երևանի, Տփխիսի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի թեմական դպրոցների վար-

շութիւններին յայտարարել նորա իմաստը այն աշակերտներին, որոնց կարող է վերաբերել, և ապա պատշաճ միջոցառութիւններ յարուցանել, սահմանուած կարգով, զինուորական ծառայութեան կանչուող աշակերտներին լրացուցիչ ժամանակամիջոցներ տալու մասին, մինչև նոցա ուսումն աւարտելը։ Այս մասին տեղեկութիւն տալ դեպարտամենտին։

Թ. 684. Նոյեմբերի 19/20-ին Մինոզը լսեց Վեհափառ Հայրապետի Նոյեմբ. 11-ի թ. 1478 կոնդակը, Արտակ վարդապետին Բագուի Հայոց եկեղեցիների գործակալ նշանակելու մասին, որոշեց. Արտակ վարդապետին Բագուի Հայոց գործակալ նշանակելու մասին յայտնելով Ճամախու թեմական առաջնորդին, Երևանի փոխ-թեմականին և, վերջնիս ձեռքով, իրեն Արտակ վարդապետին՝ նախ՝ պատուիրել փոխ-թեմականին կարգադրել տալ Արտակ վարդապետին ճանապարհածախք, ըստ շրջաբերականի, վիճակային արդիւնքից և նշանակել այլ ոք Նոր-Բայազիտի գործակալ և երկրորդ՝ պատուիրել Ճամախու առաջնորդին կարգադրել Արտակ վարդապետի ռոճկի մասին, պաշտօնը ստանձնելու օրից։